

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

# ՔԻՄԻԱ

2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ

# ՈՒՂԵՑՈՒՅՑ

Երևան 2019

Պատասխանատու՝ **ԳՅՈՒԼՆԱՐԱ ՓԱԼԻԿՅԱՆ**

Գնահատման և թեստավորման կենտրոնը շնորհակալություն է հայտնում ՀՀ բուհերի ամբիոններին, ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտին, ուսուցիչներին և բոլոր շահագրգիռ անձանց՝ գործող ուղեցույցի վերաբերյալ հայտնած կարծիքների, առաջարկությունների և դիտողությունների համար:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԱԽԱԲԱՆ.....	4
2. ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ .....	5
3. ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՂԹԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ .....	5
4. ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՆՅՈՒԹԸ.....	12
5. ՑՈՒՑՈՒՄՆԵՐ.....	12
6. ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՂԹԻ ՆՄՈՒՇԸ.....	13

## ՆԱԽԱԲԱՆ

Ուղեցույցում ներկայացված են 2020 թ. «Քիմիա» առարկայի միասնական քննության թեստերի կառուցվածքը, տարբեր կառուցվածք ունեցող առաջադրանքների նմուշ օրինակներ, պատասխանների ձևաթուղթը և դրա լրացման կարգը, առաջադրանքներում ընդգրկվելիք ծրագրային նյութի շրջանակները:

2020 թ. միասնական քննության համար որպես հիմք են ընդունվել հանրակրթական հիմնական դպրոցում գործածության համար երաշխավորված քիմիայի ծրագրերը և դասագրքերը, ավագ դպրոցի քիմիայի ընդհանուր հոսքի ծրագրերն ու երաշխավորված դասագրքերը, ինչպես նաև «Քիմիա» առարկայի պետական ավարտական և միասնական քննությունների շտեմարանները՝ համապատասխան փոփոխություններով:

**Քննական թեստերը կազմվում են «Շտեմարաններում» առկա առաջադրանքներից և «Շտեմարանների» առաջադրանքների հիմքի վրա կազմված նոր առաջադրանքներից:**

## 1. ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

«Քիմիա» առարկայի միասնական քննական թեստը ներառում է 57 առաջադրանք (80 միավոր): Թեստում առաջադրանքները երեք կառուցվածքային տիպի են՝ ընտրովի պատասխանով, կարճ պատասխանով և պնդումների փունջ:

Թեստում 40 առաջադրանք (1-40-րդ) ընտրովի պատասխանով են և ընդգրկում են քիմիայի առարկայական ծրագրի գրեթե բոլոր թեմաները: 41-68-րդ առաջադրանքներն ու ենթաառաջադրանքները կարճ պատասխանով են, որոնցից ***մեկը կարճ պատասխանով համապատասխանեցնելու առաջադրանք է, իսկ 69-րդ և 70-րդը՝*** պնդումների փունջեր են:

Միասնական քննական թեստի առաջադրանքների կատարման համար տրամադրվում է 180 րոպե:

Բուհ ընդունվելու համար միասնական քննության միավորը հաշվարկվում է 20 միավորանոց սանդղակով՝ հիմնվելով ամբողջ աշխատանքի կատարման արդյունքում դիմորդի հավաքած միավորների վրա:

## 2. ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՊՍՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՂԹԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ


I. Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

Ա. Պարզ առաջադրանքներ

*Այսօրինակ առաջադրանքների համար տրվում է պատասխանի չորս տարբերակ, որոնցից միայն մեկն է ճիշտ:*

Նմուշ 1. Ածխածնի առաջացրած  $n^{\circ}$  ր պարզ նյութի բյուրեղավանդակն է պատկերված, և ի՞նչ հիբրիդային վիճակում են գտնվում ածխածնի ատոմներն այդ նյութում:

- 1) ալմաստ,  $sp^3$
- 2) գրաֆիտ,  $sp$
- 3) ֆուլերեն,  $sp$
- 4) գրաֆիտ,  $sp^2$



Բ. Համապատասխանեցում:

*Այսօրինակ առաջադրանքների համար տրվում են երկու կամ երեք սյունակներ և որանց տողերի համապատասխանեցումով կազմված պատասխանների տար-*

*բերականեր: Տրված շարքերից պետք է ընտրել պատասխանների այն տարրերակը, որում տողերի համապատասխանեցումը ճիշտ է:*

**Նմուշ 2.** Համապատասխանեցրե՛ք դարձելի ռեակցիայի ջերմաքիմիական հավասարումը հավասարակշռության տեղաշարժի ուղղության հետ՝ ճնշումը և ջերմաստիճանը միաժամանակ բարձրացնելիս.

Ռեակցիայի հավասարում	Ճնշման բարձրացում	Ջերմաստիճանի բարձրացում
ա) $2\text{SO}_{2(g)} + \text{O}_{2(g)} \rightleftharpoons 2\text{SO}_{3(g)} + Q$	1) դեպի աջ	Ա) դեպի ձախ
բ) $2\text{CO}_{(g)} \rightleftharpoons \text{C}_{(u)} + \text{CO}_{2(g)} - Q$	2) դեպի ձախ	Բ) չի տեղաշարժվի
գ) $2\text{Fe}_{(u)} + \text{O}_{2(g)} \rightleftharpoons 2\text{FeO}_{(u)} + Q$	3) չի տեղաշարժվի	Գ) դեպի աջ
դ) $\text{I}_{2(g)} + \text{H}_{2(g)} \rightleftharpoons 2\text{HI}_{(g)} + Q$		

*Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.*

- 1) ա1Ա, բ1Գ, գ1Ա, դ1Ա
- 2) ա1Ա, բ1Գ, գ1Ա, դ3Ա
- 3) ա3Ա, բ3Գ, գ2Ա, դ1Ա
- 4) ա1Գ, բ3Ա, գ1Գ, դ3Գ

**Գ.** Համարների շարքի ընտրություն:

*Այսօրինակ առաջադրանքների համար տրված շարքերից պետք է ընտրել պահանջին համապատասխանող համարների (տառերի կամ թվերի) հաջորդականությունը:*

**Նմուշ 3.** Հետևյալ մասնիկներից որո՞նք կարող են ցուցաբերել վերականգնիչ հատկություն.

ա)  $\text{Cl}^{\ominus}$ , բ)  $\text{Cl}^{\ominus}$ , գ)  $\text{Na}^{\ominus}$ , դ)  $\text{Na}^{\oplus}$ , ե)  $\text{S}^{\ominus 2}$ , զ)  $\text{S}^{\ominus 6}$ :

- 1) բ, գ, զ
- 2) ա, բ, դ
- 3) ա, բ, գ, ե
- 4) բ, դ, ե, զ

**Դ.** Երկհարցանի առաջադրանքներ:

*Այսօրինակ առաջադրանքների համար տրվում է երկու հարց՝ պատասխանների ընտրությամբ: Յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է մեկ միավոր:*

Նմուշ (4-5). Անորոմ նորմալ պայմաններում խառնել են մեկական մոլ մեթան և էթան:

4. Որքա՞ն է գազային խառնուրդի զանգվածը (q):

- 1) 2
- 2) 16
- 3) 30
- 4) 46

5. Որքա՞ն է գազային խառնուրդի խտությունը ըստ ջրածնի:

- 1) 8
- 2) 11,5
- 3) 15
- 4) 23

**Գնահատման չափանիշը:** 1-40-րդ առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր, սխալ պատասխանը՝ 0:

**Ձևաթղթի լրացման կարգը:** Պատասխանների ձևաթղթում 1-40-րդ առաջադրանքներից յուրաքանչյուր առաջադրանքի համարի ներքևում տրված է չորս վանդակ: Տրված առաջադրանքի ճիշտ պատասխանը գտնելուց հետո անհրաժեշտ է տվյալ պատասխանի համարին համապատասխանող վանդակում դնել «X» նշանը: Օրինակ ենթադրենք, 3-րդ առաջադրանքի ճիշտ պատասխանը 1-ինն է (տե՛ս նկար 1):

	...	<b>3</b>	...
1		X	
2			
3			
4			

Նկ.1

II. Կարճ պատասխանով առաջադրանքներ


Ա. Համապատասխանեցում կարճ պատասխանով:

*Այսօրինակ առաջադրանքների համար տրվում են երկու պունակ և դրանց տողերի համապատասխանեցումով կազմվում է պատասխանը:*

Նմուշ 1. Համապատասխանեցրե՛ք թթվի քիմիական բանաձևը և քլոր տարրի օքսիդացման աստիճանը:

Բանաձև	Քլորի օքսիդացման աստիճանը
ա) HClO	1) +1
բ) HClO <sub>2</sub>	2) +5
գ) HClO <sub>3</sub>	3) -1
դ) HClO <sub>4</sub>	4) +3
	5) +7
	6) 0

**Ձևաթղթի լրացման կարգը:** Այս առաջադրանքին պատասխանելիս անհրաժեշտ է գրել կարճ պատասխանը՝ նախատեսված հորիզոնական վանդակներից յուրաքանչ-յուրում գրելով մեկ նիշ՝ պահպանելով տառերի և թվերի ճիշտ համապատասխանությունը (տե՛ս նկար 2):



Նկ. 2

Բ. Մեկ, երկու և երեք ենթաառաջադրանքից կազմված խնդիրներ:

Նմուշ (1-3). Նատրիումի հիդրոկարբոնատի 17,5 % զանգվածային բաժնով 672 գ լուծույթին ավելացրել են 171 գ բարիումի հիդրօքսիդ պարունակող 585 գ լուծույթ: Ռեակցիաներն ավարտվելուց հետո նստվածքը առանձնացրել են լուծույթից:

- 1) Որքա՞ն է նստվածքի զանգվածը (գ):
- 2) Ի՞նչ զանգվածով (գ) լուծույթ է ստացվել:
- 3) Որքա՞ն է լուծույթում պարունակվող ալկալիի զանգվածը (գ):



**Հաշվարկներում պետք է օգտագործել հարաբերական ատոմային զանգվածների կլորացված արժեքները (բացի քլորից՝ 35,5):**

**Գնահատման չափանիշը:** Թեստի 41-68-րդ առաջադրանքներից և ենթաառաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր, սխալ պատասխանը՝ 0:

**Ձևաթղթի լրացման կարգը:** 41-68-րդ առաջադրանքներին ու ենթաառաջադրանքներին պատասխանելիս անհրաժեշտ է գրել կարճ պատասխանը՝ ձևաթղթում նախատեսված հորիզոնական չորս վանդակներից յուրաքանչյուրում գրելով մեկ թվանշան: Առաջադրանքի պատասխանը կարող է լինել 0-9999-ը ամբողջ թվերից որևէ մեկը: Օրինակ, ենթադրենք, 51-րդ առաջադրանքի պատասխանը 8 է, 52 –րդինը՝ 65, 53 –րդինը՝ 216, 54–րդինը՝ 6439: (տե՛ս նկար.3):

51	8			
52	6	5		
53	2	1	6	
54	6	4	3	9

Նկ.3

**III. Պնդումների փունջ**

Այսօրինակ առաջադրանքներից յուրաքանչյուրում ներկայացվում է վեց պնդում որևէ թեմայի վերաբերյալ, որոնցից յուրաքանչյուրին կարելի է տալ երեք պատասխան՝ «ճիշտ է», «Միայն է» կամ «Չգիտեմ»: Այդ առաջադրանքներից հնարավոր է վաստակել առավելագույնը 6 միավոր:

**Նմուշ. Հաստատե՛ք կամ հերքե՛ք պնդումների ճշմարտացիությունը ծծմբի (IV) օքսիդի վերօքս հատկությունների վերաբերյալ:**

- 1)  $SO_2 + 2H_2O + Cl_2 = H_2SO_4 + 2HCl$  *ռեակցիայում օքսիդացման արդյունքում ստացված նյութի գործակիցը 1 է:*
- 2)  $5SO_2 + 2KMnO_4 + 2H_2O = K_2SO_4 + 2MnSO_4 + 2H_2SO_4$  *ռեակցիայում այն վերականգնիչ է:*
- 3)  $SO_2 + 2H_2S = 3S + 2H_2O$  *ռեակցիայում ամբողջ ծծումբը ստացվում է ծծմբի (IV) օքսիդի վերականգնումից:*
- 4)  $2SO_2 + O_2 = 2SO_3$  *ռեակցիայի 80 % էլքի դեպքում  $m_{\text{գոյացած}}(SO_3) = m_{\text{փոխազդած}}(SO_2)$ :*
- 5)  $SO_2 + 2NaOH = Na_2SO_3 + 2H_2O$  *ռեակցիայում այն օքսիդիչ է:*
- 6)  $SO_2 + 2H_2S = 3S + 2H_2O$  *ռեակցիայում ծծմբի (IV) օքսիդը ցուցաբերում է օքսիդացնող հատկություն:*

**Գնահատման չափանիշը:** Յուրաքանչյուր պնդման դիմաց ճիշտ նշված «Ճիշտ է» կամ «Միայն է» պատասխանի համար տրվում է մեկական միավոր: Յուրաքանչյուր սխալ նշված «Ճիշտ է» կամ «Միայն է» պատասխանի համար փնջից դիմորդի հավաքած միավորներից հանվում է մեկ միավոր: Եթե հանվող միավորների թիվը հավասար է կամ գերազանցում է տրվող միավորների թիվը, ապա առաջադրանքի պատասխանը գնահատվում է զրո և ամբողջ թեստից վաստակած միավորներից միավոր չի հանվում: «Զգիտեմ» պատասխանի համար միավոր չի տրվում և չի հանվում:

**Ձևաթղթի լրացման կարգը:** Պատասխանների ձևաթղթում պնդումների փնջի յուրաքանչյուր պնդման համարի ներքևում տրված է երեք վանդակ: Տրված պնդման պատասխանը գտնելուց հետո անհրաժեշտ է դրան համապատասխանող վանդակում դնել «X» նշանը: Օրինակ, ենթադրենք, «Պնդումներ փունջ» առաջադրանքի համար ընտրվել են՝ 1-ինը՝ «Ճիշտ է», 2-րդը՝ «Ճիշտ է», 3-րդը՝ «Միայն է», 4-րդը՝ «Ճիշտ է», 5-րդը՝ «Միայն է», 6-րդը՝ «Ճիշտ է» պատասխաններ ապա պետք է լրացնել հետևյալ ձևով (տե՛ս նկար 4)։

70	1	2	3	4	5	6
Ճիշտ է	X	X		X		X
Միայն է			X		X	
Զգիտեմ						


Նկ.4

**Ձևաթղթում պատասխանների ուղղման կարգը:** Ձևաթղթում տրված է սխալ նշված պատասխանն ուղղելու 5 հնարավորություն, որից 2-ը՝ ընտրովի պատասխանով առաջադրանքների համար, 2-ը՝ կարճ պատասխանով առաջադրանքների համար, 1-ը՝ պնդումների փնջի համար: Եթե անհրաժեշտ է փոխել ընտրովի պատասխանով առաջադրանքի սխալ նշված պատասխանը, ապա նախատեսված դաշտի հորիզոնական վանդակում պետք է գրել առաջադրանքի համարը, իսկ նրանից ներքև համապատասխան վանդակներից մեկում դնել «X» նշանը (տե՛ս նկար. 5):


	3	2
1		
2		
3	X	
4		

Նկ.5

Կարճ պատասխանով, այդ թվում նաև «Համապատասխանեցում կարճ պատասխանով» առաջադրանքների սխալ նշված պատասխանը փոխելու դեպքում ուղղման դաշտում հորիզոնական երկու վանդակներում գրվում է առաջադրանքի համարը, որից հետո վանդակներում լրացվում է պատասխանը (համապատասխանության համար՝ պահպանելով տառերին համապատասխանացրած թվերի հաջորդականությունը): Նկար 6-ում պատկերված է կարճ պատասխանով համապատասխանության ուղղված պատասխանը, (ա-2, բ-5, գ-3, դ-5):



Պնդումների փնջի սխալ նշված պատասխանը փոխելու դեպքում ուղղման դաշտում վերևի հորիզոնական վանդակներում պետք է գրել առաջադրանքի համարը և պնդման համարը, իսկ նրանից ներքև համապատասխան վանդակում դնել «X» նշանը (տե՛ս նկար 7):



### 3. ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՆՅՈՒԹԸ

«Քիմիա» առարկայի պետական ավարտական և միասնական քննական թեստում առաջադրանքներն ընտրվում են համաձայն հանրակրթական դպրոցի «Քիմիա» առարկայի ուսումնական ծրագրերի: Ստորև ներկայացվում են յուրաքանչյուր բաժնից թեստում ընդգրկված առաջադրանքների տոկոսային և միավորային համամասնությունները (տե՛ս աղյուսակ 1)

*Աղյուսակ 1*

<i>Հ/Հ</i>	<i>Քիմիայի հիմնական բաժիններ</i>	<i>Մոտավոր մասնաբաժին (%)</i>
<i>1</i>	<i>Ընդհանուր քիմիա</i>	<i>34-35</i>
<i>2</i>	<i>Անօրգանական քիմիա</i>	<i>35-36</i>
<i>3</i>	<i>Օրգանական քիմիա</i>	<i>26 -23</i>
<i>5.</i>	<i>Քիմիան և կյանքը</i>	<i>5-6</i>
	<i>Ընդամենը</i>	<i>100</i>

### 4. ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

**Քննական սենյակում թույլատրվում է ունենալ՝**

- քիմիական տարրերի պարբերական աղյուսակ
- աղերի լուծելիության աղյուսակ
- մետաղների լարվածության էլեկտրաքիմիական շարքը
- հաշվիչ

# ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՈՒՂԹԸ

2020թ. միասնական քննություն  
**Պատասխանների ձևաթուղթ**  
**Քիմիա**



ազգանուն

անձնական համար

անուն

հայրանուն



1 1

Թեստ №

1  2  3  4

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	
Պատասխանի համարը	1	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	1
	2	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	2
	3	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	3
	4	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	4
	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36	37	38	39	40	
Պատասխանի համարը	1	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	1
	2	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	2
	3	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	3
	4	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	4

Կարճ պատասխանով առաջադրանքներ

Պատասխանի համարը	41	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	46	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	51	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	56	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>
	42	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	47	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	52	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	57	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>
	43	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	48	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	53	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	58	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>
	44	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	49	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	54	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	59	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>
	45	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	50	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	55	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	60	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>

Ամբողջ ձևաթղթում սխալ նշված պատասխանները փոխելու տեղը

Ընտրովի

	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>
1	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
2	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
3	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
4	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>

Կարճ

<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>
<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>

Պատասխանի համարը	61	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	65	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>
	62	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	66	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>
	63	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	67	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>
	64	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	68	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>

ա բ գ դ

Պնդումների փունջ

**69**

Գիշտ է  1  2  3  4  5  6

Սխալ է

Չգիտեմ

Պնդումների փունջ

**70**

Գիշտ է  1  2  3  4  5  6

Սխալ է

Չգիտեմ

Պնդումների փունջ

Գիշտ է

Սխալ է

Չգիտեմ

Արտագրե՛ք այս նախադասությունը՝

Շանոթ եմ քննության կարգին: